ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 20

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

28.08.2019թ. **ք.Վանաձոր**

Մասնակցում էին

Գ.Մարկոսյանը - մարզպետի տեղակալ

Վ.Խաչատրյանը -գլխավոր քարտուղարի տեղակալ

Ն.Ասրյանը, Ա.Մխիթարյանը, Ա.Մատինյանը, Ա.Հարությունյանը, Դ.Մանուչարյանը, Է.Հախվերդյանը, Ա.Շահվերդյանը, Վ.Սայադյանը, Գ.Բաղդասարյանը, Ա.Ադլոյանը, Հ.Մկրտչյանը, Ն.Համբարձումյանը - ստորաբաժանումների ղեկավարներ և այլ պաշտոնատար անձինք

Լ.Ասլանյանը -մարզպետի խորհրդական

Հ.Այվազյանը -մարզպետի խորհրդական

Ռ.Խանզադյանը -մարզպետի օգնական

Ն.Հովհաննիսյանը -մարզպետի օգնական

Օ ր ա կ ա ր գ ա ն դ՝

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների ամփոփում

/Գ. Մարկոսյան, ստորաբաժանումների ղեկավարներ/

2. Մարզպետարանի ստորաբաժանումների առաջիկա շաբաթվա ընթացքում կատարվելիք աշխատանքների մասին

/Ա.Ղուկասյան/

3. Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա.Ջանազյանին՝

Կատարված ուսումնասիրությունների հիման վրա ներկայացնել տեղեկատվություն և առաջարկություններ մարզի համայնքների տրանսպորտային փոխադրումների վերաբերյալ:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչության պետի պաշտոնակատար Ա.Բեջանյանին՝

Անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել սեփական եկամուտների հավաքագրման մեծ պարտավորություններ ունեցող համայնքների ղեկավարների հետ եռամսյակային պլանային ցուցանիշները ապահովելու նպատակով:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատար Ռ.Հարությունյանին՝

Ներկայացնել առաջարկություններ «Գիտելիքի օրվա» հետ կապված միջոցառումների վերաբերյալ:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետի ժ/պ՝ Է.Հախվերդյանին

Սահմանված ժամկետներում պարբերաբար հաշվետվություններ ներկայացնել տրված հանձնարարականների (ԱԳԼՃԿ-ների, հողամասերի աճուրդների, վաճառքների, տրամադրման և այլ հարցերի) վերաբերյալ:

Invalid signature

X

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ **Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

Արձ. Ս.Մակարյան

Հեռ. 0322 /4-32-99/